ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Տիգրան Եսայան - Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի միջազգային համագործակցության բաժնի պետ

2. Գործուղման վայրը, ժամկետները.

Հունաստանի Հանրապետություն (ք. Սալոնիկ), 2025 թվականի մարտի 11-13-ը

3. Հրավիրող կողմը.

Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպություն (ԿԱՀԿ)

4. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Եվրոպայում երկար տարածության փոխադրումների վերաբերյալ ԿԱՀԿ ազգային կոնտակտային անձանց տարածաշրջանային ցանցի 5-րդ հանդիպմանը մասնակցելու նպատակով

5. Քննարկված թեմաները.

Հանդիպումը նպատակ ուներ ամրապնդել ԿԱՀԿ ազգային կոնտակտային անձանց ներգրավվածությունը Եվրոպայում երկար տարածության վրա փոխադրումների ոլորտում՝ վերհիշելով նրանց դերն ու պարտականությունները և ամրապնդելով իրավասու մարմինների միջև հաղորդակցությունն ու համագործակցությունը՝ կապված Եվրոպայում կենդանիների երկար տարածության վրա փոխադրումների հետ:

6. Հանդիպումները, ելույթները, բարձարցված կամ քննարկված հարցերը.

Հանդիպմանը մասնակցում էին 45-ից ավել պետությունների ազգային կոնտակտային անձինք: Հանդիպումը հնարավորություն տվեց մասնակիցներին ներկայացնելու

կենդանիների փոխադրման վերաբերյալ ԿԱՀԿ գլոբալ և տարածաշրջանային մակարդակներում համապատասխան գործողությունների վերաբերյալ թարմացումները, ինչպես նաև կենդանիների տեղափոխման ընթացքում նրանց բարեկեցության խնդիրների լուծման գործում իրականացնելու փորձի փոխանակում: Քննարկվեցին հարցեր կապված կենդանիների փոխադրման վերաբերյալ Եվրամիության օրենսդրական առաջարկների, կենդանի կենդանիների արտահանման, առկա մարտահրավերների և հեռանկարների հետ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Ձեռք է բերվել պայմանավորվածություն ԿԱՀԿ ազգային կոնտակտային անձանց միջև կենդանիներին երկար տարածության վրա փոխադրումների ժամանակ առաջացած խնդիրների ժամանակ ապահովել ակտիվ համագործակցության տվյալ երկրների ԿԱՀԿ ազգային կոնտակտային անձանց միջև:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները, եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

9. Ստորագրությունը, ամսաթիվը. 19 մարտի 2025թ.